Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

Քաղաք Երևան, 1 փետրվարի, 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցում են՝
Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)
Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

1. **Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին**

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2022 թվականի փետրվարի 1-ին հեռակա քվեարկության ներկայացված հարցի վերաբերյալ անդամները ներկայացրել են հետևյալ դիրքորոշումները՝

Ա.Ասոյան՝ ներակայացված Նախագծում առկա են հետևյալ թերությունները.

- «Տեսչական մարմինների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ Տեսչական մարմինների տարեկան հաշվետվությունները առնվազն ներառում են վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը, ինչպես նաև կանխարգելիչ գործողությունները և այն ռիսկերը, որոնց վերհանմանն են ուղղված, և որոնք կանխել են դրանք: Վերոնշյալ տեղեկատվությունը Նախագծում ներկայացված է թերի, մասնավորապես՝ ներկայացված չէ ռիսկերի իրավիճակի հստակ վերլուծությունը, ինչպես նաև ինչ է հնարավոր եղել կանխել կանխարգելիչ գործողությունների արդյունքում:
- Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Նախագիծը պետք է ներառի խորհրդատվական գործունեությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի վերհանումը և այն իրավական ակտերը, որոնք տալիս են դրանց հստակ պատասխանները, սակայն Նախագծով չեն նշվում այն իրավական ակտերը, որոնք տալիս են վերհանված հարցերի հստակ պատասխաններ:
- Միաժամանակ, Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Նախագիծը պետք է ներառի տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վերհանել են տեսչական մարմինները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը, սակայն վերհանված խախտումների պատճառները և տարածվածությունը Նախագծում ներկայացված չէ:
- Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ Նախագիծը պետք է ներառի օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները՝ օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով, որը Նախագծում ներկայացված է թերի, մասնավորապես՝ օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման առաջարկները և այլ տեղեկատվությունը ներկայացված է ընդհանրական:
- Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումները ներկայացված են միայն սննդամթերքի անվտանգության ոլորտի համար և բացակայում են անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում: Բացի այդ, ներկայացված չէ նաև դատական կարգով բողոքարկման արդյունքները:

- Հաջորդիվ, Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տարեկան հաշվետվության փաստացի տվյալները պետք է համեմատվեն նախորդ երկու տարիների իրավիճակներն արտացոլող տվյալների հետ, մինչդեռ Նախագծով նման համեմատություն չի ներկայացվել:
- Միաժամանակ, տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման կողմից ներկայացված գործունեության կատարողականի գնահատման արդյունքների հիման վրա կազմված ամփոփ տեղեկատվության մեջ ներկայացված Տեսչական մարմնի և դրա ծառայողների գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ բերված բողոքների քանակը չի համապատասխանում Նախագծով ներկայացված բողոքների քանակին:
- Բացի այդ, անհրաժեշտ եմ համարում Նախագծում անալիտիկ և քանակական վերլուծությունների, այդ թվում՝ իրականացված միջոցառումների արդյունքների մասով, ինչպես նաև վերհանված խնդրիրների, բացահայտված ռիսկերի ուղղությամբ հստակ գործողությունների ներառումը, որն իր հերթին հնարավորություն կընձեռի վերահսկողության ոլորտներում գրանցել դրական արդյունքներ:

Առաջարկություններն ընդունվել են նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հավանություն տալու Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի հաշվետվության նախագծին:

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի 3-րդ եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ